ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/237

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.05.2022թ. թիվ 26/26-1/8807-2022 գրությամբ Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.05.2022թ. թիվ ՊՆ/02/2219-2022 գրության հիման վրա, 16.05.2022թ. թիվ 26/26-1/8807-2022 գրությամբ նախաձեռնել է Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«01/03/2022թ.-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը /ՀՀ ՊՆ/ armeps.am կայքում հրապարակել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/6» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու մրցույթ: Այս մրցույթի շրջանակներում հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 10/03/2022թ.-ը:

Վերը նշված մրցույթը կայացել է, որի արդյունքում 10/03/2022թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 53, 64, 65 չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ն:

15/04/2022թ.-ին ՀՀ ՊՆ-ն Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ի yesayan-armen89@nail.ru էլեկտրոնային հասցեին է ուղարկել պայմանագիր կնքելու մասին առաջարկը, որով առաջարկել է 10 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ՊՆ ներկայացնել պայմանագրի ստորագրված տարբերակները:

Այս ծանուցմամբ պայմանագիրը ներկայացնելու ժամկետը ավարտվել է 28/04/2022թ.-ին, որին 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է հետևեր լիազոր մարմին դիմելու՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու ընթացակարգը:

Սակայն, ՀՀ ՊՆ-ն լիազոր մարմին է դիմել 6 աշխատանքային օր անց՝ 06/05/2022թ.-ին, այսինքն ՀՀ կառավարության 04/05/2017թ.-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Անհրաժեշտ ենք համարում մեջբերել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 12/08/2020թ.-ի թիվ ՍՑ-LO-2020/190 և 06/11/2020թ.-ի թիվ ՍՑ-LO-2020/242 որոշումները, որոնց համաձայն պատվիրատուն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու գործընթացը նախաձեռնել էր վերը նշված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ: Արդյունքում, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի ուժով մեկնաբանելով Կարգի 45-րդ կետը և մեջբերելով ՀՀ վճռաբեկ

դատարանի նախադեպային որոշումները, գտել է, որ միայն Կարգի 45-րդ կետի պահպանման պայմաններում է առաջանում վերը նշված իրավահարաբերությունը, հետևաբար ժամկետի խախտմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու ընթացակարգը ենթակա է մերժման:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև պայմանագիր չկնքելու պատճառներին և նշել, որ պայմանագրի չկնքումը անմիջականորեն պայմանավորված չի եղել Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ի ցանկության հետ: Այսպես.

Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ն գնային առաջարկը ներկայացնելիս հաշվարկել է մատակարարվող ապրանքի պատրաստման գինը՝ հաշվի առնելով շուկայական գինը և գնային տատանումները: Սակայն, այն, նախ՝ հայտ ներկայացնելու և պայմանագրի միջև ընկած ժամանակահատված տևել է մոտ 2 ամիս: Երկրորդ՝ պայմանագրի կնքման և կատարման ժամանակահատվածը համընկել է ռուս- ուկրաինական պատերազմի հետ, որի արդյունքում գնաճը գերազանցել է կանխատեսվող չափերը, որին հաջորդել է արտարժույթի կտրուկ նվազումը և տատանումը, ինչպես նաև ՌԴ-ի նկատմամբ սահմանված պատժամիջոցները, որոնք անմիջականորեն ազդել են ՌԴ-ից ներկրվող շինանյութի օրեցօր բարձրացող գնի վրա: Այսինքն, Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ի կողմից պամանագրի չկնքումը առաջացել է իր կամքից անկախ հանգամանքներից: Ի դեպ, պայմանագրի կատարման անհնարինությանը անդրադարձել է նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 20/1/2020թ.-ի թիվ ՍՁ-ԼՕ-2220/256 որոշմամբ, որի համաձայն՝ պարտապանը պարտավորության անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում, հետևաբար գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու ընթացակարգը ենթակա է մերժման:

Ուստի, ելնելով վերը շարադրվածից, խնդրում ենք ՀՀ ՊՆ-ի դիմումի հիման վրա նախաձեռնած ընթացակարգը մերժել»:

Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/237 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.05.2022թ. թիվ ՊՆ/02/2219-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Գրասենյակային գույքի և կահույքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ էր ներկայացրել նաև Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ն: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինիս հայտը գնահատվել էր բավարար և Ընթացակարգի 53-րդ, 64-րդ և 65-րդ չափաբաժինների մասով՝ Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ն ճանաչվել էր ընտրված /հաղթող/ մասնակից: Անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված ժամկետում՝ էլեկտրոնային գնումների www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ վերջինիս ներկայացվել էր պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը: 02.05.2022թ. կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ի կողմից չի ներկայացվել գնման պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և ընթացակարգի հրավերի 9.5 կետերի պահանջները՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կեքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Հաշվի առնելով վերոգրյալը և այն փաստը, որ Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ն վերը նշված ժամկետում պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման և պայմանագրի ապահովումները, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կից ուղարկվում է վերը նշված մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/237 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/237 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/237 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին 53-րդ, 64-րդ և 65-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 15.04.2022թ. էլեկտրոնային եղանակով Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագիրը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումները:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.05.2022թ. թիվ 26/26-1/8807-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.05.2022թ. թիվ ՊՆ/02/2219-2022 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ

հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor’s) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին 53-րդ, 64-րդ և 65-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 15.04.2022թ. էլեկտրոնային եղանակով Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագիրը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումները:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 9.4-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:***

Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսինքն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում են հստակ ժամկետներ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա փաստական հանգամանքների հետ՝ գտնում եմ, որ Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ն ըստ էության հրաժարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/6» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում պայմանագիրը կնքելուց և թույլ տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ Մասնակիցը սահմանված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումները:

Անդրադառնալով՝ Ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված այն դիտարկմանն, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը լիազոր մարմին է դիմել 6 աշխատանքային օր անց՝ 06/05/2022թ.-ին, այսինքն՝ ՀՀ կառավարության 04/05/2017թ.-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ, ապա սույն մասով

հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուն ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստն, այն է՝ զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից, ի հայտ գալու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրը՝ 06.05.2022թ. թիվ ՊՆ/02/2219-2022 գրությամբ ներկայացրել է լիազորված մարմնին, որի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունը 16.05.2022թ. թիվ 26/26-1/8807-2022 գրությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում նախաձեռնել է Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, որպիսի պայմաններում արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ պահանջն, այն է՝ 5 աշխատանքային օր ժամկետը:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով Մասնակցի կողմից ներկայացված հետևյալ դիտարկմանն. «*Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ն գնային առաջարկը ներկայացնելիս հաշվարկել է մատակարարվող ապրանքի պատրաստման գինը՝ հաշվի առնելով շուկայական գինը և գնային տատանումները: Սակայն, այն, նախ՝ հայտ ներկայացնելու և պայմանագրի միջև ընկած ժամանակահատված տևել է մոտ 2 ամիս: Երկրորդ՝ պայմանագրի կնքման և կատարման ժամանակահատվածը համընկել է ռուս-ուկրաինական պատերազմի հետ, որի արդյունքում գնաճը գերազանցել է կանխատեսվող չափերը, որին հաջորդել է արտարժույթի կտրուկ նվազումը և տատանումը, ինչպես նաև ՌԴ-ի նկատմամբ սահմանված պատժամիջոցները, որոնք անմիջականորեն ազդել են ՌԴ-ից ներկրվող շինանյութի օրեցօր բարձրացող գնի վրա: Այսինքն, Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ի կողմից պամանագրի չկնքումը առաջացել է իր կամքից անկախ հանգամանքներից: Ի դեպ, պայմանագրի կատարման անհնարինությանը անդրադարձել է նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 20/1/2020թ.-ի թիվ Ս8-ԼՕ-2220/256 որոշմամբ, որի համաձայն՝ պարտապանը պարտավորության անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում, հետևաբար գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու ընթացակարգը ենթակա է մերժման*», հարկ եմ համարում արձանագրել, որ Մասնակիցը ներկայացված դիտարկման մասով, որև է վերաբերելի ապացույց չի ներկայացրել, որի

գնահատմամբ հնարավոր կլիներ փաստել կամ հերքել Պայմանագիր կնքելուց հրաժարվելու Մասնակցի մեղքի բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.05.2022թ. թիվ 26/26-1/8807-2022 գրությամբ Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Արմեն Եսայան Աշոտի Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**